

7. ՏԵՂԵԿԱՏՎԱԶՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ²³

7.1-7.5. Վիճակագրական ժողովածուներ (տարեգրքեր), տեղեկագրեր, հրատարակումներ մամուլում, մամլո հաղորդագրություններ, տեղեկատվական ամսական զեկույցներ, վիճակագրական զեկույցներ

Ծրագրով նախատեսված տեղեկատվահրատարակչական գործունեության մասով, 2004թ.-ին, ՀՀ ԱՎԾ կողմից հրատարակվել են 73 անուն վիճակագրական հրատարակումներ՝ ներառյալ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն լեզուներով):

Ծրագրով նախատեսված 20 վիճակագրական ժողովածուներից 20-ը կամ 100%-ը նախատեսված էր հրատարակել ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Փաստացի հրատարակվել է 24 ժողովածու (ընդ որում, լրացուցիչ հրատարակված 4 ժողովածուներ՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 1998-2002», «Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 1999-2003», «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում, 2003» և «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, 2003» անգլերեն լեզվով թարգմանվել և դրանցից մեկը նաև տպագրվել է TACIS ծրագրի ֆինանսական աջակցությամբ):

«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» եռլեզու ժողովածուն և «Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական ժողովածուները (հայերեն և անգլերեն լեզուներով) տպագրվել են միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ, ինչը հնարավորություն ընձեռեց ՀՀ պետական բյուջեի միջոցներով տպագրել «Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 1999-2003», «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում, 2003» և «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը, 2003» անգլերեն լեզվով ժողովածուները:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003 թվականի հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական ամսական զեկույցը թարգմանվել է անգլերեն և տպագրվել TACIS ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցները կառուցվել են ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, վիճակագրական այլ տեղեկություններ տրամադրողների կողմից ներկայացվող պետական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի, տեղեկագրերի և այլն), հաշվարկների և ՀՀ ԱՎԾ կողմից դրանց ամփոփման, մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվահրատարակչական գործունեության արդյունքում (ժողովածուներ, տեղեկագրեր, մամլո հաղորդագրություններ, զեկույցներ) ամփոփված նյութերի հիման վրա: Ջեկույցների բովանդակությունը ներկայացվել է ըստ ԱՄՀ մշակած ՏՏԸՀ հատվածների:

Տեղեկատվական ամսական զեկույցները ամսական պարբերականությամբ ներկայացվել են հակիրճ, եռամսյակային պարբերականությամբ ներկայացվել են առավել մանրամասն, ընդլայնված ու ընդհանրական: Եռամսյակային

²³ Տես՝ Ծրագիր, Հավելված III:

պարբերականությամբ զեկույցներում ընդգրկվել են «ԱՊՀ երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումներ»՝ ըստ ԱՊՀ Միջպետական վիճակագրության կոմիտեի տվյալների, «Հետաքրքրաշարժ վիճակագրություն», «Մեթոդաբանական պարզաբանումներ» և «ՀՀ ԱՎԾ փաստացի հրապարակումների ցանկը» հավելվածները:

Չեկույցներում արտացոլված, ինչպես նաև վիճակագրական այլ տեղեկություններ զետեղվել են ՀՀ ԱՎԾ <http://www.armstat.am>, ինչպես նաև ԱՄՀ <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/> ինտերնետային էջերում:

ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում առկա է Հայաստանի վիճակագրության համապարփակ մեթոդաբանությունն անգլերեն լեզվով, իսկ նույն ստանդարտի ՀՀ ԱՎԾ կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում <http://docs.armstat.am/nsdp/> երկրի համապատասխան տվյալները:

Միաժամանակ, Ծրագրով նախատեսված **19 անուն վիճակագրական տեղեկագրերի փոխարեն** հրապարակվել են 20 անուն վիճակագրական տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ՝ 85) և նախատեսված 11 անուն վիճակագրական զեկույցների փոխարեն 17 անուն վիճակագրական զեկույցներ, ներառյալ հետազոտության արդյունքներով հրապարակված 6 անուն զեկույցները՝ հայերեն և անգլերեն լեզուներով (պարբերականությունը հաշվի առած՝ 50) և «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցները:

Համաձայն Ծրագրի, պատրաստվել են ամսական պարբերականությամբ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները», եռամսյակային պարբերականությամբ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ - տնտեսական վիճակը» և ամսական պարբերականությամբ՝ «Հայաստանի Հանրապետության սպառողական գների ինդեքսը» մամլո հաղորդագրությունները, ինչպես նաև 8 անուն թեմատիկ հաղորդագրություններ (ընդհանուր առմամբ, 11 անուն մամլո հաղորդագրություն, պարբերականությունը հաշվի առած՝ 36) :

Համաձայն Ծրագրի, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալությունները (ներառյալ նաև Երևան քաղաքի գործակալությունը) հրապարակել են «Մարզի (ք. Երևանի) սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույցներ (11 անուն, պարբերականությունը հաշվի առած՝ 44) և 21 անուն վիճակագրական զեկույցագրեր (պարբերականությունը հաշվի առած՝ 31 անուն, թվով՝ 327): ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունները (ներառյալ Երևան քաղաքի գործակալությունը) 2004թ. ընթացքում պատրաստել են, պարբերականությունը հաշվի առած, ընդհանուր թվով 371 վիճակագրական զեկույց:

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ԱՎԾ միջև տեղեկատվության փոխանակման վերաբերյալ» 21.06.2001թ. հանաձայնագրի 23 կետի, ՀՀ կենտրոնական բանկին 4 ամսական, 13 եռամսյակային, 4 տարեկան և 3 միանվագ (ըստ անհրաժեշտության) պարբերականությամբ տրամադրվել է վիճակագրական տեղեկատվություն: